2017 թ. Իրավապաշտպան գործունեության ամփոփում

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

www.prwb.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ 3
ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 6
ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԱՎԱՐՏՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 6
ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ և ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

2017 թվականը կազմակերպության գործունեության համար նշանավորվել է մարդու իրավունքների խախտումների փաստագրման և պաշտպանության լայնածավալ գործողություններով: 2017 թվականի հունվարից մարտ ամիսներին կազմակերպությունը ստանձնել է 2016 թվականի հուլիսի 17-30 տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների զոհերի պաշտպանությունը: Կազմակերպության կողմից ընդհանուր թվով 32 գանգատ է ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետ՝ ՄԻԵԴ): Ներկայացված գանգատներում բարձրացվել են մասնավորապես ոստիկանության կողմից անօրինական բերման ենթարկվելու և ազատությունից զրկելու դեպքերը՝ համապատասխանաբար Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ներքո, բռնության և վատ վերաբերմունքի դեպքերը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո, հավաքները ցրելու և անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքի անօրինական սահմանափակումներն՝ Կոնվենցիայի 10 և 11-րդ հոդվածների ներքո, ինչպես նաև այս բոլոր դեպքերի կապակցությամբ արձանագրված արդյունավետ պաշտպանության միջոցի բացակայության հարցը Հայաստանի դատաիրավական համակարգում (Կոնվենցիայի 13-րդ հոդվածի ներքո):

Ներկայացված 32 գանգատներից 26-ի կապակցությամբ կազմակերպությունը արդեն ստացել է ՄԻԵԴ կողմից գործերի գրանցման որոշումները: 2 գործի գրանցում Դատարանի կողմից մերժվել է, իսկ 4 գործի կապակցությամբ դեռևս պատասխան չի ստացվել:

Կազմակերպությունը հետևողականորեն իրավական աջակցություն է տրամադրել «Սասնա Ծռեր» խմբի անդամների, զանգվածային անկարգություններ կազմակերպելու, իշխանության ներկայացուցչի նկատմամբ ուժի կիրառման մեջ մեղադրվող 11 անձի իրավունքների պաշտպանության համար:

2017 թվականի ընթացքում կազմակերպության կողմից իրականացվեց և մինչ օրս շարունակվում է իրականացվել 2016 թվականի հուլիսին տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ որպես մեղադրյալ ներգրավված քաղաքացիների նկատմամբ քրեական գործերով մինչդատական փուլում որպես խափանման միջոց նշանակված կալանքի որոշումների ուսումնասիրություն:

Միաժամանակ, պատրաստվել է զեկույց՝ 2016 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 3-ը տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ:

Զեկույցը կազմվել է «Իրազեկ քաղաքացիների միավորում», «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե», «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ», «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» և «Հելսինկյան քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

Առաջին անգամ Հայաստանում կազմակերպության կողմից իրականացվել է հուլիսյան դեպքերի կապակցությամբ մեղադրանք առաջադրված քաղաքացիների քրեական գործերով մինչդատական կալանքի որոշումների ուսումնասիրություն՝ մինչդատական վարույթում ազատությունից զրկելու միջազգային չափանիշների հետ համեմատական վերլուծությամբ: Ուսումնասիրության հիմքում դրվել է Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասի Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ Դատարանի կողմից ընդունված մոտեցումներն ու սկզբունքները:

Ընդհանուր առմամբ կազմակերպության կողմից ուսումնասիրվել են թվով 38 քաղաքացիների նկատմամբ նշանակված որպես խափանման միջոց ընտրված կալանքի որոշումներ: Ուսումնասիրության հիմքում դրվել է Եվրոպական Դատարանի կողմից 5-րդ հոդվածի վերաբերյալ դատական գործերի ուսումնասիրության արդյունքում վեր հանված կալանքի երաշխիքների և այդ գործերով արձանագրված հիմնական խնդիրների համեմատական վերլուծությունը՝ որոշումների պատճառաբանվածություն, հիմնավորվածություն և ընդհանուր առմամբ նշանակված կալանքի օրինականություն:

2017 թվականի ընթացքում կազմակերպության կողմից, բացի վերը թվարկված 2016 թվականի հուլիսի 17-30-ը տեղի ունեցած խախտումների հիմքով ներկայացված գանգատների, ՄԻԵԴ է ներկայացվել լրացուցիչ ևս 5 գանգատ:

- 2017 թվականի հունվար ամսին կազմակերպություն է դիմել քաղաքացի Կ.Ա.-ն՝ ներկայացնելով իր մասնակցությամբ քաղաքացիական վեճի քննության ընթացքում ներպետական դատարանների կողմից թույլ տված արդար դատաքննության իրավունքի մի շարք խախտումներ, դատավորների մասնակցությամբ արձանագրված կոռուպցիոն ռիսկեր, ինչը հանգեցրել է նաև վերջինիս սեփականության իրավունքի խախտմանը: Սույն գործի շրջանակներում կազմակերպությունը գանգատ է ներկայացրել ՄԻԵԴ՝ բարձրացնելով քաղաքացու արդար դատաքննության իրավունքի (հոդված 6) և սեփականության իրավունքի (Առաջին Արձանագրության առաջին հոդված) խախտման հարցերը:
- Քաղաքացի Ա. Գ.-ը դատապարտվել է ճանապարհատրանսպորտային կանոնների խախտման հետևանքով անզգուշությամբ մահ պատճառելու համար: Ա.Գ.-ի դատապարտումը սակայն կայացել է մրցակցային դատաքննության բացակայությամբ պայմաններում, ավելին, կայացվել են չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտեր, օգտագործվել են հակասական ապացույցները, իսկ ամենակարևորը՝ խախտվել է վերջինիս

անմեղության կանխավարկածի իրավունքը: Կազմակերպությունը գանգատ է ներկայացրել՝ Դատարանի առջև բարձրացվել են քաղաքացու արդար դատաքննության և սեփականության իրավունքի խախտման հարցերը:

- Հ. Ն.- գործով կազմակերպությունը երկրում առաջին անգամ ՄԻԵԴ-ին է ներկայացրել պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի հետ կապված հիմնահարցերն ու ըստ այդմ անձի ազատության իրավունքի խախտումը՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ներքո:
- Ի.Ղ., Ն.Մ. և Գ. Ս.-ն գործով ՄԻԵԴ ներկայացվել է խաղաղ պայմաններում զինված ուժերում իրենց տղաների մահվան հանգամանքների բացահայտմանն ու մեղավորների բացահայտմանն ու պատասխանատվության ենթարկելու պահանջով մասնակիցների խաղաղ հավաքների, անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքների խախտումները: Ն.Մ.-ի գործով կազմակերպության իրավաբանները դատարանի առջև բարձրացրել են քաղաքացու առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջ՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո, ինչպես նաև վերջինիս արդար դատաքննության իրավունքի խախտումը 6-րդ հոդվածի ներքո:

Ողջ տարվա ընթացքում կազմակերպության իրավաբանների կողմից առանձնակի կարևորություն և ուշադրություն է հատկացվել 2016 թվականի Ապրիլի 2-5 տեղի ունեցած քառօրյա պատերազմի ընթացքում ԼՂՀ –ից տեղահանված բնակչության և ակտիվ ռազմական գործողությունների ընթացքում սպանված ու խոշտանգված զինվորների պաշտպանությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Դատարան են ներկայացվել, մասնավորապես, գանգատներ ԼՂՀ Պաշտպանության բանակի 22 զինծառայողների ընտանիքի անդամների անունից՝ զոհվածների նկատմամբ միջամտության հետևանքով դիմումատուների հանդեպ դրսևորված անմարդկային վերաբերմունքի, զոհվածների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի, իրավական պաշտպանության միջոցի, ինչպես նաև ազգային հիմքով խտրականության չենթարկվելու իրավունքների խախտումները ճանաչելու պահանջով: Երեք զինծառայողների առնչությամբ գանգատներում բարձրացվել է նաև նրանց կյանքի իրավունքի և խոշտանգումների ու անմարդկային վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի խախտման հարցը:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների և արդարադատության ճգնաժամը Հայաստանում 2017 թվականի հունվար-հուլիս ամիսներին

2017 թվականի հուլիսին կազմակերպությունն եռանդուն մասնակցություն ունեցավ «Սասնա Ծռեր» խմբի անդամների պաշտպանների իրավունքների խախտումների հանրայնացման և շահերի պաշտպանության համար:

Կազմակերպությունը ստանձնել է պրակտիկայի, ներպետական օրենսդրության և միջազգային չափանիշների համեմատական ուսումնասիրությանը՝ վեր հանելով առկա խնդիրներն ու առաջարկելով դրանց լուծմանն ուղղված կոնկրետ լուծումներ[1]:

Արդյունքում, կազմակերպության կողմից պատրաստվել է «Մարդու իրավունքների և արդարադատության ճգնաժամը Հայաստանում 2017 թվականի հունվար-հուլիս ամիսներին» տեղեկանքը: Վերջինս շրջանառվել է շահագրգիռ բոլոր անձանց շրջանում, ուղարկվել է տարբեր գերատեսչական մարմիններին, քաղաքական կուսակցություններին և միջազգային կառույցներին:

ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԱՎԱՐՏՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կազմակերպության իրավաբանները տարվա ընթացքում ներգրավված են եղել նաև տարբեր դատական գործերում, որոնք վերաբերել են ինչպես քրեական ու քաղաքացիական, այնպես էլ վարչական ոլորտներին:

ԻՊԱՍ-ի իրավաբանները մասնակցել են հետևյալ հարցերի կապակցությամբ ծագած դատական գործերին՝

- Ծեծի մեղադրանքով կասկածյալի պաշտպանություն
- Համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակության գործով վկայի ներկայացուցչություն
- Մտավոր սեփականության իրավունքի խախտման առնչությամբ և զրպարտության գործով պատասխանողին իրավական աջակցություն
- Բանտերում կոռուպցիոն ռիսկերի՝ մասնավորապես դատապարտյալի կողմից կաշառք տալու գործով վերջինիս դատական պաշտպանություն
- Շորթման գործով մեղադրյալի դատական պաշտպանություն
- Ոստիկանությանը վիրավորանք հասցնելու գործով պատասխանող կողմի դատական պաշտպանություն

[1] http://prwb.am/new/wp-content/uploads/2017/07/Final-14-July-Information-note-on-crisis-of-justice-in-Armenia.pdf

- Քրեակատարողական հիմնարկ կազմակերպության իրավաբանի, ով միևնույն ժամանակ հանդիսացել է նաև ՔԿՀ-ներում դիտորդություն իրականացնող դիտորդական խմբի անդամ, մուտքը ՔԿՀ խոչընդոտելու կապակցությամբ սկսված դատավարություն
- Պայմանական վաղաժամկետ ազատման հարցի կապակցությամբ դատարան դիմումի ներկայացում

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ և ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության իրավաբանները տարվա ընթացքում մասնակցել են տեղական և միջազգային կառույցների կողմից կազմակերպված մարդու իրավունքների տարբեր միջոցառումների:

Միջազգային ասպարեզում հատկանշական են կազմակերպության ներգրավվածությամբ հատկապես հետևյալ միջոցառումները՝
- Կազմակերպության նախագահը 2017 թվականին մասնակցել է **Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի և Քաղաքացիական հանդուրժողականության պլատֆորմի** բոլոր հանդիպումներին
- Կազմակերպությունը մայիս ամսին մասնակցել է **ԵՄ-Հայաստան, Քաղհասարակության հետ Մարդու իրավունքների 8-րդ երկխոսության** քննարկումներին և գրավոր նյութեր են ներկայացրել արդյունքների ամփոփման համար
- Հունիսին կազմակերպության նախագահը մասնակցել է **ԵՄ արտոնությունների ընդհանրացված համակարգի** մոնիթորինգային հանդիպմանը, որտեղ գնահատվել են 27 միջազգային փաստաթղթերի վերաբերյալ գրանցված առաջընթացները
- Կազմակերպության իրավաբանները մասնակցել են **ԵԱՀԿ Մարդու իրավունքների տարեկան և ընթացիկ հանդիպումներին**՝ ներկայացնելով իրենց գործունեության ընթացքում արձանագրված տարբեր ոլորտային խնդիրներ
- Կազմակերպությունը ներգրավված է եղել **ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման** վերաբերյալ քննարկումներին և զեկույցի պատրաստմանը:

Սրան զուգահեռ կազմակերությունը <u>այլընտրանքային զեկուցներ</u> է ներկայացրել հետևյալ կառույցներին՝

- **Վենետիկի հանձնաժողով**: ներկայացվել է դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունն ու վերհանված ռիսկերը:
- **Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանց**: ներկայացվել է այլընտրանքային զեկույց երկրում կոռուպցիայի դեմ պայքարի կապակցությամբ ձեռնարկված քայլերի, առկա խնդիրների ու կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության հեռանկարների վերաբերյալ: